ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 600-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 465-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00912455) կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի հուլիսի 3-ի «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի կողմից իրականացվող «Բազմաթիվ օգուտներ արևային էներգիայի և գյուղատնտեսության համադրման միջոցով» N 465-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վոլտա-Յու» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08424978) 2024 թվականի հուլիսի 30-ին կնքված թիվ ԷՀԳ-ԳՄՀԸ-ՋՐՄԿ/2024-2 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանի կառուցման

աշխատանքների իրականացում՝ 12,190,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02595412) 2024 թվականի օգոստոսի 1-ին կնքված թիվ #01.1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման ծառայություն-ների մատուցում՝ ամսական 51,875 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

27.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ